ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Աշխեն Հովսեփյան[1]

ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Բանալի բառեր. առևտուր, հնդիկ արքայազներ, հայ վաճառականներ, աջակցություն, ազատագրական գաղափարախոսության ձևավորում, գաղթօջախներ:

Հնդկաստանի բարենպաստ աշխարհագրական դիրքը և կլիմայական պայմանները հնագույն ժամանակներում մշտապես գրավել են օտարներին, այդ թվում և հայերին: Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակաշրջանից մինչ Վասկո դա Գամայի Հնդկաստանի հայտնագործումով, (ով Հնդկաստան ծովային ճանապարհով հասած առաջին եվրոպացին էր) հայերը եկամտաբեր առևտրով էին զբաղվում Հնդկաստանի հետ Պարսկաստանի տարածքով, որի մասին իրենց աշխատություններում արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Քսենոփոնը (մ.թ.ա. V-IV դդ.), Զենոբ Գլակը (մ.թ.ա. IV դ.), Մովսես Խորենացին (V դ.), Պրոկոպիոս Կեսարացին (VI դ.)[2]:

Հետաքրքրության է արժանի հին Հնդկաստանում հայերի առաջին անգամ հայտնվելու հանգամանքը: Վարկածներ են պահպանվել, որ Բաբելոնում՝ Շամիրամի թագավորության ժամանակահատվածում դեպի Հնդկաստան արշավանքի ժամանակ, (մոտ մ.թ.ա. 2000թ.-ին), հայերը, լինելով ասորիների

[1] Աշխեն Հովսեփյան՝ ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնի հայցորդ, ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի վերլուծության և զարգացման ծրագրերի վարչության գլխավոր մասնագետ: Էլ.հասցե՝ ashkhenhovsepyan48@gmail.com

[2] Բայբուրդյան Վ.,«Ուշ միջնադարում հայերի շփումների պատմությունից Հարավային և Հարավ-Արևելյան Ասիայի ու Հեռավոր Արևելքի երկրների հետ» ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության Ինստիտուտ, Արևելագիտական Ուսումնասիրություններ 2,էջ 58,Երևան 2011:

հետ ժամանակակակից ազգ հավանական է մասնակցած լինեին այդ արշավանքին: Պահպանվել է նաև մեկ այլ վարկած, որ հայերը, որպես հույների դաշնակիցներ հնարավոր է մասնակցած լինեին մ.թ.ա. 327թ.-ին՝ Ալեքսանդր Մակեդոնացու Հնդկաստան արշավանքին, քանզի հայտնի պատմական փաստերի համաձայն նա անցել է Պարսկաստանի տարածքով դեպի Հնդկաստան տանող ճանապարհով, որտեղ և հաղթել է Պարսից արքա Դարեհին[3]:

Մեզ հասած աղբյուրների համաձայն հայերը շատ վաղ ժամանակներից առևտրային հարաբերությունների շնորհիվ ակնհայտորեն բարեկամական կապեր էին հաստատել հնդիկ արքայազների հետ և պահպանված առասպելական տեղեկատվությունների համաձայն հանուն քաղաքական շահերի հայերն ապաստան էին տրամադրել Կանաուջի (այժմ քաղաք Հնդկաստանի Ուտար-Պրադեշ նահանգում) երկու դասալիք հնդիկ արքայազների, ովքեր քրիստոնեական դարաշրջանից առաջ փախել էին իրենց երկրից, և ապաստան գտել հեռավոր Հայաստանում: Այս դասալիք արքայազները, ովքեր դավադրություն էին կազմակերպել Հնդկաստանի թագավոր Դինակսպալի դեմ, որը գերագույն իշխանություն էր հաստատել Կանաուջում, հայոց պատմության մեջ հայտնի են իրենց հելլենիզացված «Գիզանե» և «Դիմետր» անուններով, վերջինս հնդկական Գանեշայի էությունն է (հինդու աստված) և հնդկական Ջագերնաթիի հունարեն թարգմանությունը, որը նշանակում է տիեզերքի տիրակալ:

Մեր կողմից առանձնապես հատուկ հետաքրքրության է արժանացել հնդիկ փախստականների առասպելական պատմությունը, որոնք ընդունվեցին Հայաստանում՝ իրենց

[3] Seth M. J., “History of Armenians in India from the earliest times to the present day”,p. 18-20, London 1897.

արքայազնի արժանապատվությանը համարժեք ողջույնի խոսքերով՝ հայոց թագավոր Վաղարշակի՝ Պարսից Արշակ Մեծի[4] կրտսեր եղբոր կողմից: Ուշագրավ է, որ հայոց արքան նրանց հատկացրեց Տարոնի շրջանը, որտեղ քաղաք կառուցեցին անվանելով Վիշապ, այնուհետև գնալով Աշտիշատ քաղաք՝ հիմնեցին իրենց աստվածությունների պաշտամունքը, ում նրանք երկրպագում էին դեռ Հնդկաստանում: Այս արքայազների մահից հետո կրոնական գործունեությունը շարունակեցին նրանց սերունդները, ովքեր այդ ժամանակաշրջանում վայելում էին ազգային դավանանքի ազատությունը և այդ ժամանակաշրջանի հեթանոսական կառավարության հովանավորության ներքո ստեղծեցին գաղութ:Արքայական բարերարության ալիքը այնուամենայնիվ, սկսեց թուլանալ 300-ականներին՝ քրիստոնեության սկզբնական շրջանում: Այս ընթացքում էլ որոշվեց հնդկական ազգային աստվածների ճակատագիրը՝ ոչնչացվեց նրանց պաշտամունքը, այնուհետև Գրիգոր Լուսավորչի կողմից ներկայացվեց արքայական հրամանագիրը, որի ուժով հինդու քրմերը հեռացվեցին:

Հատկապես կարևոր ենք համարում անդրադառնալ քրիստոնեական դարաշրջանի սկզբին Հնդկաստանում հայ վաճառականների գործունեության, որոնց վերաբերյալ պահպանված տեղեկությունների համաձայն՝ Կասին՝ ժամանակակից Վարանասին(քաղաք Հնդկաստանում), հայ վաճառականների գլխավոր կայանն էր, ովքեր այնտեղ էին գնում ցամաքային ճանապարհով՝ Պարսկաստանից անցնելով Քաբուլով և ապա Վարանասի, քանի որ «Լավ Հույսի» հրվանդանով դեպի Հնդկաստան տանող ծովային ուղին այդ ժամանակ եվրոպական նավարկողների համար դեռ հայտնի չէր: Սակայն, նախքան Վասկո դա Գամայի ճամփորդությանը, հիշատակվում է Մար

[4] Valarsacles, Arsaces

Թոմաս անունով մի հայի մասին, ով դեռ 780թ.-ին իջավ Մալաբարի ափին (Հնդկական թերակղզու հարավ-արևմտյան ափ), երբ Շեռ Ռամն էր Կրանգանորի կառավարիչը: Մառ Թոմասն կառավարչի կողմից արժանանալով մեծ բարեհաճության կարողացավ հետագայում զգալի հարստություն կուտակել՝ զբաղվելով տեքստիլի և համեմունքների առևտրով, քանի որ սա էր հանդիսանում Հնդկաստանի ափերը որոնելու իր հիմնական նպատակը[5]:Տեղեկություններ են պահպանվել նաև Բագրատունյաց թագավորության տարիներին Սմբատ 2-րդի նախաձեռնությամբ Անիի Մայր տաճարի համար Հնդկաստանից 80000 ոսկի արժողությամբ բյուրեղյա ջահ բերելու մասին[6]:

Ինչ վերաբերում է հայերի հոսքին դեպի Հնդկաստան, ապա մեզ հասած տեղեկատվության համաձայն հոսքը սկսվել էր Մոնղոլյան կայսրության ժամանակաշրջանից, որի շքեղությամբ գայթակղված շատ հայ վաճառականներ ներգաղթեցին Ագրա(քաղաք Հնդկաստանում)՝ ստեղծելով իրենց առևտրային բնակավայրը:

Պահպանվել են պատմական տեղեկատվություններ Աքբար Մեծի (Մեծ Մոնղոլների ժամանակաշրջանի կայսր) և հայ վաճառական պարոն Հակոբի վերաբերյալ, որի շրջանակներում հիշատակվում է Աքբար Մեծի կողմից պարոն Հակոբի երիտասարդ որդու որդեգրումը, ում նա հանդիպել էր դեռ Քաշմիրում(այժմ նահանգ՝ Հնդկաստանի հյուսիսում) իր «աննկատ ճամփորդության» ընթացքում, իսկ արդեն տարիներ անց Հակոբը ստանձնեց Ջամրահարի կառավարչի պաշտոնը[7]:Այս որդեգրման

[5] Seth M. J., “History of Armenians in India from the earliest times to the present day”,p.21-23, London 1897.

[6] Աճառյան Հ., «Հայ գաղթականության պատմություն»,Հնդկաստան, էջ-293, գլխ. խմբագիրներ՝ Ավետիսյան Հ., Բարսեղյան Հ., Զանգակ-97, Երևան, 2002:

[7] Միքայելյան Վ., «Հայ գաղթաշխարհի պատմություն(միջնադարից մինչև 1920թ.)»,2-րդ հատոր՝ Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, Հնդկաստան, էջ-383, Երևան, 2003:

դեպքը տեղի ունեցավ Ջեհանգիրի ծնվելուց մի քանի տարի առաջ, ում ծնունդը 1570 թ.-ին նա վերագրեց Ագրայում հայերի գալստյանը: Հայերն Մոնղոլական կայսրության բարգավաճման շրջանում այդ քաղաքում ծաղկում ապրեցին և հանդիսանում էին այդ կայսրության անվերապահ կողմնակիցներ: Դրա մասին վկայում է անգամ 1562 թ.-ին Ագրայում հայերի կողմից կառուցված եկեղեցին, և որպես հայերին հաճոյանալու նշան թույլատրվեց անգամ գաղութի հոգևոր պատասխանատու առնվազն մեկ հայ քահանա լինի այնտեղ[8]:

Հայերի առևտրային գործունեությունը սակայն միշտ չէ, որ հարթ է ընթացել, դրա մասին են վկայում մոնղոլների կայսրության անկմանը հաջորդած անօրինությունների հետևանքով առաջացած ճգնաժամը, որը սպառնալիք հանդիսացավ հայերի առևտրային գործունեությանը[9]: Բարդ հետևանքների հանգեցրեց նաև Շահ Աբբասի օրոք կազմակերպված տեղահանումը դեպի Ջուղա, և հայերը Հնդկաստանի հետ առևտուր անելու համար ստիպված եղան Ջուղայից Սպահան, այնուհետև Բուսրահ՝ Եփրատի ափ, իսկ այնուհետև կարողացան նավարկել դեպի Հնդկաստան:Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայերի առաջին ձևավորած նավահանգիստը Սուրաթ քաղաքն էր(քաղաք Հնդկաստանի արևմուտքում), իսկ նախքան անգլիացիների վերաբնակեցումը Մոնղոլների իշխանության օրերին հայերը և Հնդկաստանից արտերկիր արտահանող առևտրի առաջնորդները Բենգալում (նախանգ Հնդկաստանի արևելքում) ստեղծել էին մի քանի առևտրային բնակավայրեր, որոնք այդ ժամանակ համարվում էին առաջինը իրենց բնույթով: Հայերը մշտական

[8] Aslanian S., “JULFA v. ARMENIANS IN INDIA,” Encyclopaedia Iranica, XV/3. http://www.iranicaonline.org/articles/julfa-v-armenians-in-india

[9] Մոնղոլների պատմական մայրաքաղաքում՝ Ագրայում մինչ օրս պահպանվել են հայկական արձանագրություններով տապանաքարեր, որոնց մասին ժամանակակից հնդիկ պատմաբանները լռում են:

բնակություն հաստատեցին նաև Մուրշիդաբադի (քաղաք արևելյան Հնդկաստանում՝ Բենգալ նախանգում) առևտրային արվարձան Սայեդաբադում 1665թ.-ին Դելիի մոնղոլ կայսր Աուրանգզեբեի կողմից թողարկված արքայական հրամանի ուժով, որի արդյունքում նրանց տրամադրվեց լիակատար թույլատվություն՝ տալով հողակտոր[10]:

Ուշագրավ իրողություն է 1652թ.-ին Չինսուրայում(քաղաք Հնդկաստանի Արևմտյան Բենգալ նախանգում) ստեղծված առևտրային ավանը, իսկ ավելի ուշ բարեպաշտ Մարգարի ընտանիքի կողմից այնտեղ կառուցվեց հայկական եկեղեցի, որը հետագայում ճանաչվեց որպես Բենգալիայի երկրորդ ամենահին քրիստոնեական եկեղեցին:Վերջինիս հիմքերը դրվեցին 1695 թ.-ին, որն ավարտվեց 1697թ.-ին՝ նվիրված լինելով Սբ. Հովհաննես Մկրտչին: Իսկ ազնվական Մարգարների ընտանիքի ամենաակնառու ներկայացուցիչը, թերևս, հայտնի Խոջա Հովհհանես Մարգարն էր(մահացել է 1697թ.-ին), ով լինելով մեծ վաճառական պատվի և հարգանքի էր արժանացել անգամ արքաների և կառավարիչների կողմից:

Հիշատակություններ են պահպանվել նաև հայ առևտրական Խոջա Իսրայել Սարհադի վերաբերյալ, ով 1715թ.-ին Դելիում դեսպան է նշանակվել, իսկ նախքան այդ 1687թ.-ի հուլիսին ուղարկվել էր որպես քաղաքական գործակալ Զաբարդաստ Խանի ճամբար, ինչպես նաև հիշատակվում է որպես առևտրական և այդ ժամանակ մեծ հարգանք վայելող քաղաքական գործիչ: Առանձնահատուկ ուշադրության են արժանանում Հնդկաստանի պատմության դժվար ժամանակներում հայերի աջակցության վերաբերյալ հիշատակումները, մասնավորապես պատմության մեջ հայտնի «Կալկաթայի սև խոռոչը» (1756թ.) հաղթահարելու

[10] Seth M. J., “History of Armenians in India from the earliest times to the present day”, p. 23-37, London 1897.

գործում իր մեծ ներդրումը ունեցավ հայազգի առևտրական Խոջա Պետրոս Արաթոնը, ով նաև Կալկաթայում (քաղաք Հնդկաստանում) հայ համայնքի ղեկավարն էր: Ռազմաշունչ ոգու դրսևորումների դրվագրերի վառ օրինակներից է Խոջա Գրիգորը կամ Գորգին Խանը, ով իր շուրջն էր հավաքել տարբեր բնակավայրերից շուրջ հարյուր հայերի, որոնց մի մասին նշանակել սպաներ՝ իր կողմից լիակատար հրամանատարությամբ բանակում [11]:

Ուշագրավ է հիշատակել 1770-ական թթ.-ին Մադրասում (այժմյան Հնդկաստանի հարավում Չեննայ քաղաք) հիմնված «Մադրասի խմբակի մասին», որի ակնառու դեմքերն էին Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը, Հարություն Շմավոնյանը, ովքեր մեծ դեր են կատարել հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության ձևավորման գործում, որի մասին են վկայում 1772թ.-ին Մադրասի հայկական տպարանում լույս տեսած Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» գիրքը, իսկ ավելի ուշ՝ 1773թ.-ին՝ «Որոգայթ փառացը»[12], որը նախատեսվում էր ապագա Հայաստանի Առաջին Հանրապետության պետական կազմակերպության ծրագիրը լինել[13] :

Բազմաթիվ աղբյուրներում հիշատակվում են ազնվական Սամուել Մուրադի, Մադրասի նախագահությունում հայերի մասին, 1801թ.-ին Կալկաթայում հայկական կազմակերպության, ինչպես նաև Դակկայում, Բոմբեյում (այժմյան Հնդկաստանի Մումբայ քաղաք) Լաքնայությունում (քաղաք՝Հնդկաստանի Ուտտար-

[11] Seth M. J., “History of Armenians in India from the earliest times to the present day”, p. 65-80, London 1897.

[12]Շահամիրեան Յ.. Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, 1913. shorturl.at/chISZ

[13]Թանանյան Գ. «Որոգայթ Փառաց» (Հրատարակման 230-ամյակի առթիվ), 2013:http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/13._Grigor_Tananyan.pdf

Պրադեշ նահանգում) հայերի ակտիվ գործունեության մասին[14]: Սակայն նշենք, որ հայկական գաղթօջախների երբեմնի դիրքը, հզորությունը այժմ գոյություն չունի, բայց Հնդկաստանի պատմության մեջ հայերի ներգործությունը անվիճելի է, մասնավորապես հայ առևտրականների դերը, ովքեր տնտեսական զարգացման գործում մեծ ազդեցություն են ունեցել: Այնուամենայնիվ, ինչպես նշեցինք, տարբեր ժամանակներում հնդկական կառավարությունները, անշուշտ, իրականացրել են առավելագույնը հայերի համար խոչընդոտները վերացնելու և տնտեսության զարգացումամբ զբաղվելու հնարավորություններ ստեղծելու համար: Մեզ հասած աղբյուրների ուսումնասիրությամբ կարող ենք եզրակացնել, որ հնդկական կառավարությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ առաջին հերթին բխում էր հայկական գաղթօջախների, հայ անհատների վստահելիությունից, հայ վաճառականների ազգային զարգացման գործում ներդրումներից, նոր մտածողության, նոր քաղաքակրթության փոխադրման և հնդկական կառավարությունների հետ տնտեսական, սոցիալական և մշակութային շահերի համընկնումից:

ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL OVERVIEW

Ashkhen Hovsepyan

(Summary)

In ancient times, India attracted foreign merchants, including Armenians, who were engaged in profitable trade there. Since ancient times, Armenians had established friendly relations with the Indian princes of Kannauj due to their trade relations, and even provided princes of Kannauj asylum in Armenia.

[14]Ավետիսյան Կ.Մ., Ավետիսյան Ա.Ա., Հայրենագիտական էսյուդներ: «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1979 : http://armenianhouse.org/avetisyan/india.html

The main station of Armenian merchants is mentioned in Kashi, modern Varanasi (a city in India). Armenians also showed their support during the difficult times in the history of India, particularly Khoja Petros, an Armenian merchant, who had a great contribution to overcoming the famous" Black hole of Calcutta "(in 1756). Armenians, being in India, also supported the formation of the liberation ideology of the Armenian people, which is evidenced by the works published in the Armenian printing house in Madras in 1772 and 1773. Nowadays, however, the former position and power of the Armenian colonies do not exist, but the role of the Armenian economic influence in the pages of the history of India is indisputable.

АРМЯНО-ИНДИЙСКИЕ ОТНОШЕНИЯ. ИСТОРИЧЕСКИЙ ОБЗОР

Ашхен Овсепян

(Резюме)

В древние времена Индия привлекала иностранных торговцев, в том числе и армян, которые занимались здесь прибыльной торговлей. Армяне с древних времен установили дружеские отношения с индийскими принцами благодаря своим торговым связям и даже предоставили убежище индийским принцам Каннауджа в Армении.

Главная станция армянских торговцев упоминается в Каше, современный Варанаси (город в Индии). Армяне оказали свою поддержку и в трудные времена истории Индии, в частности в преодолении знаменитой «Калькуттской котловины» (1756 г.), где большой вклад внес армянский торговец Ходжа Петрос. Армяне, находясь в Индии, также содействовали формированию идеологии освобождения армянского народа, о чем свидетельствует изданные в 1772г. и 1773г. в армянской типографии в Мадрасе. 1773г.Однако, в настоящее время прежнего положения и могущества армянских колоний не существует, но роль армянского экономического влияния на страницах истории Индии неоспорима.